

1055. *ԲԵՎՈՐ*. Լոսի բերդում, գեղագիր.

ՂՈՔՆՍԱՅՍԱՄԻՄԵ՛ ԼԷ . . [ՏԵ]ՂՈՋՆ ՅԱՅՄՍ ՏԵՂ . .

Ծանոթ. Ի դեպ, Լոսի բերդում կան մի քանի արձանագրությունների բեկորներ ևս, որոնք չեն վերծանվել: Ցավոք, չի լինի օրինակվել գյուղի արևմտյան եզրի տներից մեկի բազում գտնվող երեք պատվանդաններից մեկի վրա եղած ընդարձակ վավերագիրը (խաչքարերը գոյություն չունեն):

1056. *ԼՈՈՒ ԲԵՐԴ*. ամրոցի արևմտյան պարսպապատի հարավային կիսաբլուր աշտարակի հյուսիսային որմնածքում, կոպտատաշ խոշոր քարի վրա, 3 տող.

ԻՌՈՒԹՈՐԻ ԶԿՈՐԿՈՏԱՐՐՈՑԻՆ
ԱՐՐՈՑԻՆԿԼԵԱԼՆՃԱԿԱԳԻՍԱԿԲ
ԱԶԱԿԱՆԱՑՆՆՈՅՆԴԵՍՄՉՃ

. . [ՈՒԹՈՐԻ ԶԿՈՐԿՈՏԱՐՐՈՑԻՆ [ԵՒ ԶԱԲԱՐԱՐԻ-
ԱՐՐՈՑԻՆ ԿԱԲԱԼՆ ՏԱԲԱԳ ՍԱՐՔԵՒ
. . . [ԽՂԱՉԱՅԱՆԱՑՆ ՆՈՅՆՊԵՍ ՈՐ ԶԵ . . .

Չրատ. Ավագյան, ՎԱԲ, 146-147:

Ծանոթ. Այլուստ չդիտված այս եզակի բովանդակությամբ վավերագիրը կրող քարը նախնական տեղում չէ և նրա մի կտորն է խցկած պատի մեջ: Այս առթիվ Ս. Ավագյանն իրավացիորեն նկատել է. «Արձանագրությունը հավանաբար բավականին ընդարձակ է եղել, տեղավորված մի քանի քարերի վրա, որոնցից մեզ է հասել միայն մեջտեղինը»: Եւ «մի կողմ թողնելով ամբողջ բնագրի վերականգնման խնդիրը, որն ինքնին շատ կարևոր է», բժախնդրորեն քննել է միայն այստեղ հանդիպող *կորկոտարրոց* տառակապակցությունն ու այլուր ևս դիտված *կաբալ* տերմինը՝ հանգելով այն եզրակացության, որ զիջվել-վերացվել է գանձվող կորկոտի (ծավար) աղունավարձը:

Կոահել կարելի է, որ.

ա) Բնակչության սննդամթերքում կարևոր տեղ է գրավել ծավարեղենը և տեղում զարգացած է եղել ընդեղենի արտադրությունը:

բ) Բնակչության կարիքները հոգալու համար ամրոցամերձ արագահոս գետերի վրա գործել են ջրաղացներ ու դանկեր՝ հատուկ վարձավճարով: Դեռևս պահպանվում են մի շարք ջրաղացներ և ջրատար արխերի մնացորդները:

գ) Ներկա պարագայում խոսքը վերաբերում է ոչ թե վարձավճարի իսպառ վերացմանը (եթող), որն անհավանական է, այլ կարգավորմանն ու հսկողությանը (սուրքե)՝ կանայականությունները կանխելու համար: Իսկ այդ պարտավորությունը դրվում է արտադրական ձեռնարկության՝ *ծավարարրոցի* (ծավար արարողի, աղացողի) տիրոջ *ծաւազի* (= ճավակ, գավակ) վրա: Հստակություն կմտցվի արձանագրության ամբողջանալու դեպքում:

ՆՈՅՆՄԲԵՐՅԱՆԻ ԵՆԹԱՇՐԶԱՆ

Նոյեմբերյանի շրջանը թեև ճարտարապետական հուշարձանների առատությամբ աչքի չի ընկնում և չի կարող համեմատվել ոչ հարակից Թումանյանի և ոչ էլ Իջևանի շրջանների հետ, սակայն այն, ինչ կա՝ ուշագրավ է իր ինքնատիպությամբ, ժամանա-

կագրական առանձնահատկություններով: Շրջանում կան հին բազիլիկներ, վաղ միջնադարյան գմբեթակերտ հորինվածքներ՝ փարթամ, մեծածավալ վանական մի հաստատություն և վերջապես լավ պահպանված բերդ ու միայն քանակական սակավությունն է, որ թույլ չի տալիս ըստ արժանվույն գնահատել շրջանի ճարտարապետական ժառանգությունը:

Վաղ միջնադարում Եոյեմբերյանի շրջանը կազմել է Գուգարք նահանգի հարավարևելյան սահմանային հատվածը: X-XII դդ. պատկանել է Կյուրիկյաններին՝ լինելով Տաշիր-Չորագետի թագավորության կազմում: Շրջանի որոշ հատվածներ մտել են Վահրամյանների տիրույթների մեջ:

Առանձին գավառներ (Կանգարք, Կողբափոր) XII-XIII դարերում պատկանել են Ջաքարյաններին: Դատելով Բերդավանի հզոր ամրոցից, գավառն ունեցել է ռազմավարական կարևոր նշանակություն: Սակայն Մշկավանքի և Կոթիի Ս. Սարգիս նշանավոր վանական հաստատությունների առկայությունը վկայում է շրջանում մշակութային ու կրթական մեծաբովանդակ օջախների գործունեության մասին:

ՆՈՅՆԱԲԵՐՅԱԼ

Քաղաքում հին և նշանավոր հուշարձաններ չկան: Միակ՝ բազիլիկ եկեղեցին վերանորոգված է XIX դարում: Քաղաքի գործող գերեզմանոցում կան մի քանի սովետական խաչքարեր, որոնցից երկուսն ունեն հիշատակագրություն.

1057. ԽԱՉՔԱՐ. գերեզմանոցում, ցածր պատվանդանով, վրան 7 խաչապատկերներ, 1 տող.

ԹՎ ՋԴ | Մ...ԻԵ

ԹՎ[ԻՆ] ՋԴ (1455) Մ...ԻԵ...:

Ծանոթ. Ենջեցյալի անունը կիսաեղծ է, չի կարդացվում:

1058. ԽԱՉՔԱՐ. գերեզմանոցում, 2 տող.

ԹՎ[ԻՆ] ՈՂԲ (1643):

ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՄԻՍ ԹԱՄԱՄԻՆ:

ՄՇԿԱՎԱՆՔ (ՄՇԱԿԱՎԱՆՔ)

Գտնվում է Կողբ գյուղից 3 կմ հարավ-արևմուտք, շրջկենտրոնից ոչ հեռու: Վանական շենքերի խումբը բաղկացած է Ս. Աստվածածին անունը կրող եկեղեցուց և գավթից: Եկեղեցին թաղածածկ միանավ սրահ է՝ մեկ զույգ բավականին շքեղ կիսակլոր որմնամույթերով: Բեմական խորանի երկու կողմերում կառուցված են երկհարկանի ավանդատներ: Որմնամույթերը իրենց պրոֆիլավորվածությամբ մտածել են տալիս, որ այն սկզբնապես եղել է գմբեթասրահ և թաղածածկի է վերափոխվել 1139 թ. երկրաշարժից